

**ՈՉ ԻՄԱՑՅԱԼ ՄԱՂԸ ՄԱՂ Է, ԻՄԱՑՅԱԼ ՄԱՂՆ՝ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ.ԱՅՍՕՐ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ
ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՄԻՔԱՅԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է**

01.11.2022 18:35



Հայրենիքի պաշտպանության համար
փաստաբանների ընտանիքների զոհված
անդամների հիշատակը հարգելու նպատակով ՀՀ
փաստաբանների պալատի **նախագահի
որոշմամբ** սահմանված են հարգանքի տուրք
մատուցելու օրեր:

Այսօր՝ նոյեմբերի 1-ին, Արցախյան 44-օրյա
պատերազմում զոհված Միքայել Դանիելյանի
հիշատակի օրն է: Միքայելը փաստաբան Խաչիկ
Դանիելյանի որդին է:

ՀՀ փաստաբանների պալատի, ՀՀ փաստաբանական
դպրոցի և Հանրային պաշտպանի գրասենյակի
ներկայացուցիչներն այցելեցին Եռաբլուր
զինվորական պանթեոն, խնկարկեցին և ծաղիկներ
խոնարհեցին Միքայել Դանիելյանի շիրիմին:

Միքայել հերոսաբար կռվել և զոհվել է Մարտակերտի
դիրքերում՝ 2020թ. նոյեմբերի 1-ին ԱԹՍ-ի հարվածից:
Նա հետմահու պարգևատրվել է «Մարտական
Ծառայություն» և «Արիության Համար»
շքանշաններով:

Փաստաբանական համայնքի ներկայացուցիչները
Եռաբլուրում ծաղիկներ խոնարհեցին նաև
փաստաբան Մաի Հակոբյանի որդու՝ Հրաչիկ
Ավետիսյանի շիրիմին: